

ՄԻԵԴ ՆԱԽԱԴԵՊԵՐԸ՝ ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ

17.10.2013 12:14



Հարգելի փաստաբաններ,

ՀՀ փաստաբանների պալատը Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հավատարմագրային ֆոնդի հետ համագործակցության արդյունքում ուրախ է տեղեկացնել հետևյալ նախաձեռնության շարունակության մասին.

Այսուհետ փաստաբանների կողմից թարգմանված 2-3 էջից բաղկացած ՄԻԵԴ նախադեպերի համառոտագրերը հետագայում կխմբագրվեն փաստաբանների պալատի կողմից և կփոխանցվեն Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հավատարմագրային ֆոնդ՝ HUDOC իրավական բազայում վերբեռնելու պայմանով: Համաձայն Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հավատարմագրային ֆոնդի հետ ձեռքբերված համաձայնության՝ փաստաբանները պահպանելու են կատարած թարգմանության նկատմամբ հեղինակային իրավունքը, այսինքն՝ HUDOC իրավական բազայում նշվելու է թարգմանությունը կատարողի անունը: Թարգմանված ՄԻԵԴ նախադեպերի համառոտագրերը նաև տեղադրվելու են փաստաբանների պալատի նոր կայքում, այսինքն՝ ստեղծվելու է ՄԻԵԴ նախադեպային իրավունքին վերաբերող բազա, որը հասանելի է լինելու բոլոր փաստաբաններին:

Նշենք նաև, որ թարգմանությունների իրականացումը լավ առիթ է փաստաբանների համար ՄԻԵԴ նախադեպային իրավունքին ծանոթանալու և սահուն անգլերեն ունենալու համար:

Նախաձեռնությունը հավասարապես վերաբերում է նաև փաստաբանական գրասենյակներին և փաստաբանական դպրոցի ունկնդիրներին:

Ուրախ ենք տեղեկացնել, որ բազմաթիվ փաստաբաններ և ունկնդիրներ իրենց գործուն մասնակցությունն են ունեցել նախորդ նախաձեռնության շրջանակում կատարված թարգմանությունների կազմակերպման հարցում, որոնց փաստաբանների պալատը իր խորին երախտագիտությունն է հայտնում:

Բոլոր ցանկացողներին խնդրում ենք դիմել Արման Պողոսյանին (56 57 92 + 115; 091 233737) կամ էլ.

նամակ

ուղարկել arman_poghosian@yahoo.com հասցեով: Ձեզ

կտրամադրվեն թարգմանության ենթակա ՄԻԵԴ համառոտագրերը և այլ անհրաժեշտ

տեղեկություններ:

Նախաձեռնությունը կրում է շարունակական բնույթ:

Հաջորդ նորությունը: ԱՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆ. «ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԵԴ-Ի ՀԱՆԴԵՊ ԶԳԱԼԻՈՐԵՆ ԱԾԵԼ Է»

Առաջարկվող նորություններ



18.12.2013 ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ
ԱԿՈՒՄԲԻ ՆԻՍՏ



20.12.2013 ՀԱՅ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ
ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ
ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ
ՖՐԱՆՍԻԱ



24.12.2013 ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ
ՔՆՆԱՐԿՈՒՄ ԲԱՐՈՅԱԿԱՆ
ՎՆԱՍԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ
ՄԱՍԻՆ



24.12.2013 ԱՐԱ
ԶՈՀՐԱԲՅԱՆԸ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼ Է ՀԱՅԿ
ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ

Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })